ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ **18.03.2025Թ.**

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 21 անդամները, բացակայում են Նունե Թադևոսյանը, Գարիկ Պալյանը, Արշակ Խաչատրյանը, Նորիկ Մալխասյանը, Նարեկ Բաբայանը և Զարուհի Կարապետյանը:
Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյանը, համայնքի ղեկավարի գլխ.խորհրդական Վ.Չիլինգարյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Ա.Խլղաթյանը, համայնքի ղեկավարի օգնական Ա.Գասպարյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա.Զաքարյանը, Գ.Աֆյանը, Ս.Բալաբեկյանը:

Նիստը վարում է Չարենցավան համայնքի ղեկավար Հ. Շահգալդյանը:

Լսեցին.

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների դրույթներով. Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Չարենցավան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական թիվ 3 նիստի օրակարգը՝

1) Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 111-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2) Չարենցավան համայնքի 2025 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:
3) Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:
4) Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

5) Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 110–Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:
6) «Հատիկ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Կարենիս բնակավայրի վարչական տարածքում գտնվող Գյումուշի լիթոիդային պեմզաների հանքավայրի տարածքում շահագործման աշխատանքների իրականացման գործընթացին նախնական համաձայնություն տալու մասին:
7) Քաղաքացու անվամբ գրանցված 07-008-0231-0003 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության վարելահողը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
8) Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող ավտոմեքենաները աճուրդային կարգով օտարելու մասին:
9) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը, ձևը հաստատելու և Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 14-ի թիվ 14 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:
10) Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական թիվ 4 նիստի գումարման օրը սահմանելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը՝ օրակարգային հարցերի վերաբերյալ:

Կողմ-- 20 դեմ-0 ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 111-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 111-Ն որոշման հավելվածի N 1-6 հատվածներում կատարել փոփոխություններ՝

Տողի N	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը	Բյուջեի ավելացում		Ընդամենը
				Վարչ. մաս	Ֆոնդ. մաս	
1	2	3	4	5	6	7
1.	Հողի օտարումից մուտքեր		212753,897	0	20668,74	233422,637

/հազ. դրամ/

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրի անվանումը	Հոդվածի NN	Ընդամենը	Բյուջեի ավելացում		Ընդամենը
						Վարչ. մաս	Ֆոնդ. մաս	
06	4	1	Փողոցների լուսավորում	5113	0	0	20668,74	20668,74

2. Թույլատրել գնումները կատարել Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 21 դեմ- 0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2 ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 90-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. ***ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ 3569,74 ՀԱԶ. ԴՐԱՄ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼ՝***

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրի անվանումը	Հոդվածի NN	Ընդամենը	Բյուջեի ավելացում		Ընդամենը
						Վարչ. մաս	Ֆոնդ. մաս	
09	1	1	Նախադպրոցական կրթություն	4511	519303,0	2218,0	0	512521,0
09	8	1	Կրթություն (այլ դասերին չպատկանող)	4241	13423.626	1351.74	0	14775.366

2. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ -21 դեմ- 0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գ.Աֆյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 19 դեմ-1 ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԱՅԼ ԴԱՍԵՐԻՆ ՉՊԱՏԿԱՆՈՂ) ՀԱՏՎԱԾԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկ.Ա. Զաքարյան

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 6-րդ թաղամասի 27-րդ շենքի 17-րդ բնակարանի բնակիչ Ասյա Պետրոսյանի 2025 թվականի փետրվարի 24-ի թիվ 996-16, Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 6-րդ թաղամասի 16-րդ շենքի 22-րդ բնակարանի բնակիչ Ռոբերտ Պողոսյանի 2025 թվականի փետրվարի 24-ի թիվ 995-16, Չարենցավան համայնքի Արզական գյուղի Բջնիի խճուղու 20-րդ տան բնակիչ Կարեն Ասատրյանի 2025 թվականի փետրվարի 27-ի թիվ 997-16 և Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամասի 32-րդ շենքի 42-րդ բնակարանի բնակիչ Անյուտա Անտոնյանի 2025 թվականի մարտի 10-ի թիվ 1005-16 դիմումները ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել Ասյա Տիգրանի Պետրոսյանին:
2. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել Ռոբերտ Վլադիմիրի Պողոսյանին:
3. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել Կարեն Ազատի Ասատրյանին:
4. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 100.0 հազ. դրամ հատկացնել Անյուտա Կիմիկի Անտոնյանին :

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 21 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 110-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.՝ Ա.Զաքարյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի փետրվարի 21-ի թիվ 09-Ն հրամանով և հաշվի առնելով Չարենցավան համայնքի ղեկավարի տեղակալ Գ.Գրիգորյանի զեկուցագիրը՝ Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին թիվ 110-Ա որոշման հավելված 8-ում ավելացնել 18-րդ տող, «Հաստիքի անվանումը» սյունակում ավելացնել «Այգեպան», «Հաստիքի տեսակը» սյունակում ավելացնել «Տեխնիկական սպասարկման», «Հաստիքային միավոր» սյունակում ավելացնել «0,5» թիվը, «Պաշտոնային դրույքաչափը» սյունակում ավելացնել «104000» թիվը, «Աշխատավարձի չափը» սյունակում ավելացնել «52000» թիվը:

2. Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին թիվ 110-Ա որոշման հավելված 5-ի 15-րդ տողի «Հաստիքային միավորը» սյունակի «2» թիվը փոխարինել «2,75» թվով, «Աշխատավարձի չափը» սյունակի «259000» թիվը փոխարինել «356125» թվով:

3. Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին թիվ 110-Ա որոշման հավելված 2-ի 15-րդ տողի «Հաստիքային միավորը» սյունակի «2» թիվը փոխարինել «2,75» թվով, «Աշխատավարձի չափը» սյունակի «259000» թիվը փոխարինել «356125» թվով:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի թվականի ապրիլի 1-ից:

_Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 21 դեմ-0 ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

6. «ՀԱՏԻԿ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԵՆԻՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՄՈՒՇԻ ԼԻԹՈՒԴԱՅԻՆ ՊԵՄՁԱՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.՝ Ս.Բալաբեկյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման 28-րդ կետի, Չարենցավան համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Տալ նախնական համաձայնություն «Հատիկ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Կարենիս բնակավայրի վարչական տարածքում գտնվող Գյումուշի լիթուդային պեմզաների հանքավայրի տարածքում շահագործման աշխատանքների իրականացման գործընթացին:

2. Սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունն ու տեսագրությունը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Ավագանու անդամ Վ.Մակինյանը ասաց, որ «Հատիկ» ՍՊԸ-ին հանքավայրի տարածքում շահագործման աշխատանքների իրականացման գործընթացին նախնական համաձայնությունը տրվում է նախապայմանով՝ այն է՝ նախկին հարկային պարտավորությունները կատարել պատշաճ և ժամանակին:
Համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Վարուժան Բարսամյանը այս հարցի վերաբերյալ տվեց հանգամանալից պարզաբանումներ , նշեց նաև որ կազմվել է հատուկ ժամանակացույց:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 15 դեմ- 0 ձեռնպահ-6

Լսեցին.

7. ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՎԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ 07-008-0231-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկ Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով, նկատի ունենալով, որ հողերի քարտեզագրման և չափագրման ժամանակ համայնքային սեփականություն հանդիսացող 07-008-0231-0003 կադաստրային ծածկագրով, գյուղատնտեսական նշանակության վարելահողը սխալմամբ գրանցվել է որպես քաղաքացու սեփականություն, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հողերի քարտեզագրման և չափագրման ժամանակ սխալմամբ որպես քաղաքացու սեփականություն գրանցված 07-008-0231-0003 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության վարելահողը ճանաչել Չարենցավան համայնքի սեփականությունը /կից ներկայացվում է հողամասի հատակագիծը/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 20 դեմ-0 ձեռնպահ-0

Լսեցին.

8. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով ՀՀ Կոտայքի մարզպետի 23.12.2024թ. համար 01/05/08946-2024 գրությունը և Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս. Մուրադյանի զեկուցագիրը, Չարենցավան համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Թույլատրել 2025 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարել Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող ներքոնշյալ ավտոմեքենաները.

h/h	Ավտոմեքենայի տեսակը	Ավտոմեքենայի մակնիշը,տիպարը	Ավտոմեքենայի պետհամարանիշը	Արտադրման տարեթիվը	Շուկայական արժեքը	Մեկնարկային գինը
1	Մարդատար	ՆԻՍՍԱՆ TEANA	035 PP 55	2008թ.	1 886 000	1 886 000
2	Մարդատար	ԳԱԶ- 31105120	070 LL 02	2006թ.	317 000	317 000
3	Մարդատար	VAZ 21213	683 LL 70	1997թ.	426 000	426 000
4	Մարդատար	GAZ 311000	684 LL 70	1999թ.	214 000	214 000
5	Մարդատար	GAZ 3110	486 LL 70	2003թ.	214 000	214 000
6	Կոմբայն	4LZ 2,5	8128 SL	2006թ.	1 380 000	1 380 000

8	Բեռնատար	ZIL MMZ-4502	690 LL 70	1985թ.	1 584 000	1 584 000
9.	Բեռնատար	ZIL MMZ-4502	691 LL 70	1980թ.	976 000	976 000
10	Աղբատար	ZIL KO 449-10 (ZIL-4333-62)	713 SU 42	2008թ.	800 000	800 000

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 21 դեմ-0 ձեռնպահ-0

Լսեցին.

9. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ԹԻՎ 14 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով՝ Չարենցավան համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Հաստատել՝

1) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Չարենցավան համայնքի ավագանու 2014 թվականի մարտի 14-ի «Հանրային հավաքներ անցկացնելու իրազեկումների գրանցամատյանի ձեվը և վարման կարգը հաստատելու մասին» թիվ 14 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Իրավա-հասարակական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 21 դեմ-0 ձեռնպահ-0

Լսեցին.

10.ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկ Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով Չարենցավան համայնքի ավագանին՝***որոշում է***.

1. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական թիվ 4 նիստի օր և ժամը սահմանել 2025 թվականի ապրիլի 15-ը, ժամը 12:00:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 21 դեմ-0 ձեռնպահ-0

Չարենցավան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ-21 դեմ-0 ձեռնպահ-0

Առաքելյան Նորայր

Բաբայան Արայիկ

Բաղդասարյան Սահակ

Գալստյան Արթուր

Գևորգյան Գևորգ

Դավթյան Կարեն

Եփրեմյան Բաբկեն

Եփրեմյան Տարոն

Հարոյան Լիլիթ

Ղամբարյան Գարիկ

Մակինյան Վարդան

Մուքայելյան Վալերի

Շահգալդյան Հակոբ

Պապոյան Դավիթ

Պետրոսյան Ավետիք

Պողոսյան Մնացական

Սահակյան Գառնիկ

Վարդանյան Նորայր

Վարդանյան Նորիկ

Վարդանյան Սարգիս

Վարդանյան Սևակ

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ